

17836

158

891.99

4-24

1913

135

ՕՐ. ՋԱԻԱՀԻՐ ՎԱՋԵԱՆ

ՄԻՐՈՅ ԶՈՂԵՐ

(Պ Օ Է Մ Ա)

2003

891.99
4-24

ԱԼԷԲՍԱՆԴՐԱՊՈՂ
Տպարան Յ. Սանոյիանի
1913

APM.
2-715

891.99

4-24

ՕՐ. ԶԱԽԱՆԻՐ ՎԱԶԵԱՆ

ՄԻՐՈՅ ԶՈՀԵՐ

(Պ Օ Է Մ Ա)

2701

—

ԱԼԷԲՍԱՆԴՐԱԳՂԼ
Տպարան Յ. Սանոյիանի
1913

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՅՐԻԿԻՍ

Որպէս յիշատակ անգին հայրիկիս,
Նրան գրքոյկս նւէր եմ տալիս:
Թէպէտ թանգ էլ չէ,
Փոքր է նւէրս,
Բայց թանգին կփոխարինէ,
Որդիական ջերմ սէրս .

Դուստր Զատահիրից



(40024-63)
30094-63

ՍԻՐՈՅ ԶՈՅԵՐ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Հողն է հեծեծում ուշ գիշերներին,
Ողբալով մահը սիրահար զոյգի.
Գեան է շառաչում գիշերուայ ժամին,
Ողբալով սէրը սիրոյ զոհերի:
Սիրուն ծաղկունքն էլ հոտ չեն բուրում,
Երգիչ սոխակն էլ երգ չի երգում.
Լեռներն ու ձորերն ուրախ չեն թնդում,
Բոլորն միացած սև սուգ են անում:
Ջահէլ աղջկերք երգեր են հիւսում,
Նրանց երգերից վեշտ, ցաւ է հնչում:
Սիրահար զոյգի ծնողքն է սգում,
Ողջ գիշերները ախ ու վախ անում:
Արաքսն է ուժգին զարկում քարերին,
Փրփրած բերնով պատմում անցւորին՝
— Ազատ լեռների ազատ իգիթը,
Ջերմ սիրով սիրեց կոյս Մարջանիկին.
Նորա վառ սիրուց լեռներ դղրդաց:
ՎաճՎաճ դու անբաղդ Ծովակ,
Անվախ սարերի դու իգիթ Ծովակ:

1.

Խոր ձորի միջին, Արաքսի եզրին,
 Կանգնած է մի կոյս՝ նման լուսնեակին,
 Միբուն աչերը այդ չքնաղ կոյսի,
 Զմայլած դիտում է ջրի հոսանքին:
 Միբուն յոնքերը կամար են կապել,
 Սև-սև աչերը ծով-ծով են դառել,
 Կարմիր աշտերը խնձորի նման,
 Զկայ մի աղջիկ այդպես աննման:
 Երեսի վրա խալը կոլոլիկ,
 Ու դրա մօտիկ մի սիրուն փոսիկ,
 Ճակատի վրա սիրուն խոպրոպիկ,
 Տեսնողի սիրտը յուզում էր սաստիկ:
 Լայն ճակտի վրայ կար մի մեծ թախիծ,
 Տանջող սրտիկին չկար կարեկից:
 Կուզեր ունենալ ընկեր ցաւակից,
 Որ սիրող սրտին լինէր վշտակից:
 Ինչո՞ւ է այդպէս նա հեռուն նայում,
 Անծայր մշուշում ի՞նչ է որոնում:
 Ինչո՞ւ հայեացքը հեռուն է դարձնում,
 Այդպէս անհամբեր ո՞ւմ է սպասում...
 Ինչո՞ւ է վիշտը բոյն դրել սրտում,
 Ինչո՞ւ է ծածուկ արցունքներ թափում,
 Ինչո՞ւ է գիւղից հեռու նեղ ձորում,
 Արաքսի ափին լոկի տոչորում...
 Տասն և վեց դարուն բոլորած դէմքին,
 Բնաւ չի սաղում թախիծն աչերին,

Այդ չքնաղ կոյսի մատղահաս հոգին,
 Ինչո՞ւ է հեռում այդպէս ցաւաղին...
 Ու սրտի թոխչքով հեռուն սաւառնեց,
 Իր սրտով սիրած Ծովակին յիշեց.
 Յիշեց, ու դարձեալ գետակին նայեց,
 Մրմուռ վշտերը հոսանքին յանձնեց...
 Նեղ ձորը գիտէր կոյսի վշտերը,
 Բայց չէր դարմանում նրա ցաւերը.
 Գետակն էլ գիտէր նրա դարգերը,
 Գիտէր՝ խամբում են կոյսի վարդերը...
 Ո՞վ է այդ կոյսը այդչափ գեղեցիկ.
 Ինչո՞ւ է տանջում այդ ժամին լոկի.
 Դա է մի հարուստ ծնողաց աղջիկ,
 Նրան տալիս են անուն Մարջանիկ:

2.

Գիւղի վերևում, լեռան կատարին,
 Կանգնած է մէկը հրացանն ուսին:
 Լուսն ու մատախո՞հ նայում երկնքին,
 Կրծքի խորքերից հառաչում վերստին...
 Աղքատ Ծովակն է լոկի երազում,
 Մարջանի սիրուց հալ ու մաշ լինում.
 Սրտի լարերից մի լար է խզում,
 Այդ սիրոյ լարն գետափ է թռչում...
 Ծովակն աղքատ էր. վսեմ հոգու տէր,
 Նրա սրտի մէջ անկեղծ էր իւր սէր:

Ազնիւ էր հոգին աղքատ Ծովակի,
 Մաքուր էր սիրտը, որպէս հայելի:
 Նրան չէր գրաւել Մարջանի կայքը,
 Այդ ստոր զէնքով բռնկւած չէր ինքը,
 Այլ անկեղծ սէրը քաշում էր նրան,
 Դէպ մատաղ սիրտը, բարի աղջկան ..
 Նրան տեսել էր վաղ առաւօտեան,
 Երբ դաշտի միջին ծաղիկ էր փնջում:
 Նրան գրաւել էր առաջին վայրկեան,
 Երբ բարի աչերը յառել էր իրան...

3.

Խիւղագարի պէս իրար են սիրում
 Ու լոկ երազում իրար հետ փառւում:
 Սիրող սրտերը իրար մօտենում,
 Խաղաղ ապրելու տենչանքը զգում:
 Տանջւում են անվերջ, ցերեկ թէ գիշեր,
 Ուղարկում միմեանց սիրոյ բարենհր:
 Եւ ամբողջ գիւղի ջահէլ ջիւաններ,
 Ուղղում են նրանց սիրոյ վառ երգեր:

4.

Ջահիլ սրտերից այդ սիրոյ երգերն,
 Անզուսպ հառաչքից գոյացած վերքերն,
 Լսում է մի գարշ ստոր արարած,

Միշտ խորհամարելով այդ երգն տոչրւած:
 Այդ գարշ էակի տնունն էր Մարտիկ,
 Հարուստ ընտանեաց տղայ էր մէկիկ:
 Եւ գոռոց տղի անաղնիւ հոգին,
 Ուժով ուզում էր առնել Մարջանին:
 Արդեօք սիրում էր նա այդ աղջկան,
 Թէ՞ անասնական կիրքն էր բորբոքւած,
 Թէ՞ կոյսի սիրուն այտերն վարդանման,
 Քաշում էր նրան, որպէս թալիսման:
 Նա սիրում էր միշտ իր պէս հարուստին,
 Ազնիւ սիրոյ հուրը չէր այրել հոգին:
 Այլ անասնական սիրոյ ծաւալին,
 Յագեցնել կուգէր, առնելով կոյսին...

5.

...Եւ ահա հայրը կոյս Մարջանիկին,
 Ուզեց տալ նրան ստոր Մարտիկին,
 Չուզեց իր դուստրը գնայ աղքատի,
 Այլ ուզեց լինի հարս հարուստ տղի...
 Հայրը գիտէր, որ Մարջանի համար,
 Աղքատ Ծովակն է անգին զոհար:
 Որ նրա համար այս արար աշխարհ,
 Բնաւ զին չունի առանց սիրահար:



6.

Եւ հասաւ տիտուր ժամը անջատման.
Երբ պիտ զրկւէին նրանք յաւիտեան.
Եւ նրանց սրտի սէրը անսահման,
Նորից պիտ հասնի անհուն բորբոքման:
Անգութ սև բաղդը ինչո՞ւ է ուզում,
Մեռցնել վառ սէրը ջահէլ սրտերում. —
Ո՛հ, ինչո՞ւ մարդիկ անգութ են վարւում...
Անջատել սէրը, սիրող զոյգերի,
Խորտակիչ լինել բաղդը յոյսերի,
Է՛ նողկանք միայն, յանցանք ահռելի,
Ու սիրող սրտին անչափ ահռելի:
Բայց միթէ մարդիկ բնաւ չեն յիշում.
Թէ անսէր կեանքը շատ ծանր է լինում.
Որ գժբաղդութեան պատճառ են դառնում,
Սիրող սրտերի կապը անջատում...

7.

Ի՞նչ անէր այժմ խեղճ Մարջանիկը,
Ո՞ւմ պատմեր վիշտը գժբաղդ աղջիկը.
Միթէ պիտ տանջւէր, արտասուէր լսիկ,
Միթէ պիտ չսսէր, մի արա, հայրիկ...
Երբ նրա մօտով Մարտիկն էր անցնում
Հպարտ ու զուգւած առաջ ընթանում,
Մարջիկը նրան բնաւ չէր նայում,

Հարուստ Մարտիկին անվերջ էր ատում:
Իսկ երբ գալիս էր Ծովակը զոգարիկ,
Երկար նայում էր նրան Մարջանիկ.
Թափանցում նրա մութ մտքերի մէջ,
Փայլեցնում աշխուղ մի կրակ անշէջ...
Դաժան մտքերից Ծովակը տանջւած
Առաջ է գնում, գէմքն է զալկացած.
Սիրուն աչերն են խալած խաւարած,
Կեանքի պատրոյգը լիովին հանգած...
Անբաղդ Ծովակը շատ շատ է տանջւում
Ամրող զիշերներն անբուն անցկացնում,
Երազում միայն նրան էր տեսնում
Ու արտասուելով իր վիշտն էր պատմում:

8.

Անցաւ աշունը. անցաւ և ձմեռ...
Եկաւ վառ գարուն, սիրճն, ծաղկաբէր...
Եւ փըթթան ծաղկանց անուշ բուրմունքներ,
Լցրեցին անտառ, լեռներ ու դաշտեր...
Ամեն ոք կրկին նոր հոգի առած,
Բոլորն էլ գարնան հագուստներ հագած,
Դաշտերն են զիմում աշխուժով լցւած,
Երգում են երգեր վարդերին ուղղած...



Մի պայծառ երեկոյ, սիրուն աստղալից,
 Լուսնի վառ դէմքն էլ ժպտում էր վերից.
 Ու երկու սրտեր տխուր տանջալից,
 Իրար են պատմում վշտեր թունալից...
 Ո՞վքեր են զրանք սիրուն գիշերին,
 Ի՞նչ են շըշնջում միմեանց ակօնջին,
 Ինչո՞ւ տանջանքը ջահիլ սրտերին,
 Կնիքն էր զրօշմիլ սրանց դէմքերին...
 Մարջանիկը դիմում էր տղին զայրացած.
 — Երանի թէ քեզ չլինէի տեսած.
 Երանի թէ սէր չլինէի զգացած,
 Քո վառ սիրովդ չլինէի մաշւած...
 Այժմ սա կեանք չէ, որ ես եմ ապրում,
 Իմ ծնողները այլ բան են ստիպում.
 Այն զարշ Մարտիկն է իմ ձեռքը խնդրում,
 Եւ ծնողներս նրան չեն մերժում:
 Ի՞նչ անեմ այժմ, ասան ինձ շուտով,
 Ինչպէ՞ս ես ապրեմ այս խոր ցաւերով,
 Մի՞թէ պիտ թողնեմ քեզ այդպէս լալով,
 Զազիր Մաքտիկին կին դառնամ զոռով:
 Քո անկեղծ սէրը ինձ շատ է գրաւում,
 Մարտիկի կայքը ինձ չի հրապուրում:
 Ես կուզեմ ապրել քո նեղ խրճիթում,
 Եւ ոչ այն հարուստ շքեղ պալատում:
 Ի՞նչ եմ ես անում կայք հարստութիւն,
 Ինչի՞ս է պէտքը շուքիս մեծութիւն.

Շքեղ պալատի անծայր բարձրութիւն,
 Երբէք չի բերի սրտիս ցնծութիւն:
 Թող քեզ հետ փակւեմ նեղ մութ խրճիթում,
 Քեզ հետ տոչորւեմ անբաւ հոգներում,
 Ես ախ չեմ անի երբէք իմ շիրմում,
 Միմիայն թէ լինեմ քո սիրող գրկում:
 Եւ եթէ մենակ լինեմ սառ հոգում,
 Գաս ու արտասաւես վրաս անկշտում,
 Կըլսես թէ որպէս ծանր եմ հառաչում,
 Ինչպէս եմ դարձեալ «Ջան Ծովակ» կանչում:
 Երբէք չեմ կարող ես քեզ մոռանալ...
 Մի՞թէ կարող եմ առանց քեզ մնալ,
 Մի՞թէ կարող եմ հեռանալ, գնալ
 Զազիր Մարտիկին ամուսին դառնալ...
 — Ա՛խ, դու իմ կեանքի Մարջանիկ անգին,
 Առանց քեզ կեանքը չունի ոչ մի գին:
 Լաց եղիր անվերջ տխուր... ցաւազի՛ն...
 Շարժիր սրտերը քո ծնողների,
 Ասան, որ Ծովակն է իմ սրտի տէրը,
 Նրան եմ յանձնել իմ սրտի սէրը.
 Մի՞թէ անգութ են քո հէրն ու մէրը,
 Որ չըլսեն քո աղաչանքները...
 Մի՞թէ չե՞ն լսում քո ախ ու վախը,
 Որ հառաչում ես ամբողջ գիշերներ:
 Կամ թէ չեն տեսնում դառն արցունքներդ,
 Որ միշտ թռչում են սիրուն աչքերդ...
 Դու մի ամաչիլ, ասան հայրիկիդ,
 Որ շատ ես սիրում անդառն Ծովակիդ.

Ասա, որ կեանք չեմ ասի այն կեանքին,
 երբ առանց սիրոյ պիտ գնաս մէկին...
 Ո՛հ, սրտի հատոր, իմ սիրոյ հրեշտակ,
 Գիտես, ռըքան է սիրում քեզ Ծովակ.
 Գիտես, թէ արդէն քանի ժամանակ,
 Ինչպէս եմ լալիս, անվերջ... միայնակ,
 Եթէ դու տեսնիս ինձ խուլ դաշտերում,
 Թէ Խնչպէս եմ ես «Մարջանիկ» կանչում.
 Կամ թէ երբ լսես իմ երգը տըտում,
 Գիտցիր, որ երգով քեզ հետ եմ խօսում...
 Կամ թէ տեսնես ինձ սիրուն մարգերում
 Տխուր ու տրտում միայնակ շրջելիս,
 Մարգի ծաղկանցից փնջեր կապելիս,
 Գիտցիր, որ փունջս քեզ է պատկանում...
 Եւ եթէ տեսնես առւի եղերքին,
 Աչքերս յառած ջրի հոսանքին՝
 Գիտցիր, որ դարձեալ այդ լուռ վայրկեանին,
 Քո սէրն է երգում իմ մոայլ հոգին:
 Կամ թէ տեսնես ինձ գիշերւոյ ժամին,
 Անքուն, անհանգիստ մահիճիս միջին,
 Գիտցիր, որ դարձեալ այն լուռ ժամերին,
 Քո սիրոյ կրակն է այրում իմ հոգին...
 Առանց քեզ մի օր չեմ կարող ապրիլ,
 Առանց քո սիրոյ չեմ կարող շնչիլ.
 Քո սէրն է միայն ինձ կեանք տուողը,
 Եւ արշալոյսին նոր ցող բերողը...
 Իսկ թէ սև բաղդը քեզ բաժնեց ինձնից,
 Սիրոյ լաբերը կտրեց իմ սրտից,

Հէնց այդ առաջին տխուր օրերին,
 Ես վերջ կղնեմ այդպիսի կեանքին...
 Կուգեմ ես պառկած լինել սև հողում,
 Քան թէ քեզ տեսնել ուրիշի գրկում.
 Անկողնու տեղակ կուգեմ դամբարան,
 Քան տեսնել սիրտդ յանձնւած նրան:
 Ա՛խ, այն ժամանակ դու իմ աճիւնից,
 Կըլտես մի լաց վերստոր սրտից.
 Կըլտես հոռաչ տխուր լաբերից,
 Արցունք կը թափես քո սև աչերից:
 Սակայն չի լինի էլ քո սիրելին,
 Նա արդէն գերի է ընդմիշտ սառ հոգին:
 Քո արցունքներին, քո անվերջ սուգին.
 Չի լինիլ սփոփիչ—նման Ծովակին...
 —Ա՛խ, եթէ նոյնիսկ չասես հայրիկին,
 Կըզամ, կըչոքեմ նրա առաջին.
 Կըխնդրեմ անվերջ... տխուր լալագին...
 Որ չլինի պատճառ մեր անջատումին..
 Իսկ եթէ այդ էլ ինձ չը յաջողեց,
 Փախցնելու ուժը իմ մէջ խորտակեց,
 Ո՛հ, այն ժամանակ լաց եղիր Մարջան...
 Ո՛վ դու իմ կեանքի հրեշտակ անմահ...
 10.

Անցաւ և մարտը, և ապրիլ ամիս,
 Եկաւ վարդաբեր գեղեցիկ մայիս:

Դայլայլիկ սոխակ սիրուն էր երգում,
 Վարդի կոկոնին, կարծես սպասում:
 Մի այլ տեղ, ինչպէս մեղուն ջանասէր,
 Սիրուն ծաղկանցից ժողում է հիւթեր.
 Եւ անա ինչպէս ուրախ թիթեռներ,
 «Ծաղիկ են բոնել վարդի չորս կողմեր...»
 Սիրուն է նաև գարնան երեկոն.
 Աստղազարդ երկինք... կամար կապուտակ.
 Սակայն ներքեւում, վայրագ բոնութեան,
 Լինում է մի զոհ, սիրոյ նահատակ...
 Անխիղճ ծնողքը խեղճ Մարջանիկի,
 Հին սիրոյ հուրը ջահէլ սրտերի,
 Բաժնել են ուզում զոյգ սիրահարի,
 Շահասիրութեան գոռ զգացմունքից...
 Հերքել չի լինիլ այդ դաժան վճռին,
 Հայրը չի լսում բնաւ ոչ մէկին:
 Ոչ էլ լսում է անբաղդ Մարջանին,
 Առանց խղճալու նրա սև սուգին...
 Ո՛հ, որքան խնդրեց կոյս Մարջանիկը,
 Ասաց՝ իմ տէրն է աղնիւ Ծովիկը.
 Ասաց՝ որ սիրտս ափսոսեղ է թռչում,
 Որտեղ նրա վեհ հոգին է լինում...
 Ասաց՝ որ նոյնիսկ գիշեր ժամանակ,
 Երբ նա այս գիւղից հեռու է գտնւում,
 Փայլուն աստղերից մի սիրուն խմբակ,
 Ինձ էլ քաշելով ափսոսեղ է տանում:
 Ասաց՝ որ նոյնիսկ ամպած օրերին,
 Երբ չկայ արև... չկայ ջերմութիւն...

Հէնց որ տեսնում եմ սրտիս հատորին,
 Կարծես արևն է արար աշխարհին...
 Ասաց՝ իմ անգին, հայրիկ պաշտելի,
 Ինձ ատելի է անուն Մարտիկի.
 Ինձ համար կեանքը կլինի տաղալալի,
 Երբ ես պիտ ապրեմ առանց Ծովիկի.
 Անխիղճ հօր գուժը երբէք չըշարժւեց.
 Մարջանի խօսքին նա ուշք չգարձրեց,
 Նոյնիսկ կոյտական ցողն արցունքների,
 Խղճի գէթ մի թույլ շողք չգարթեցրեց:
 Այդ խնդիրքներին հայրը չըլսեց...
 Մեծ թւով մաքդիկ իր մօտ հրաւիրեց,
 Ընտիր ուտեստից սեղան պատրաստեց,
 Մետաքսէ շորերով աղջկան զուգեց...
 Որպէս մի աշնան դալուկ տերեւիկ,
 Կամ թէ նորարոյս վարդենու թերթիկ,
 Մի թեթև քամուց վախում են սաստիկ,
 Ո՛հ, նոյնն է և այժմ չքնաղ Մարջանիկ:
 Յարմար առիթ է ուզում որոնել,
 Այն նւիրական գրկի մէջ ընկնել.
 Իրաւ այդ ճիշտ էր նա շատ լաւ գիտէր,
 Թէ սիրուն Ծովակն որտեղ է կանգնել...
 Պսակ գնալու ժամը որ հասաւ,
 Բոլոր մարդկանց մէջ շփոթմունք ընկաւ.
 Նոցա մէջ մի լուռ կասկած գարթնեցու:
 Զլինի թէ Ծովակը Մարջանին տարաւ:
 Ամեն ինչ լուց... քէֆը դադարեց...
 Փողը, թմբուկը իր ձայնը կտրեց.



Ամբոխն էլ պահ մի լուռ ու կարկամած,
Իրար ականջին այսպէս փսփսաց՝
— Անշուշտ Ծովակն է
Մարջանին տարել:
Սրտի սիրածն է,
Շատ լաւ է արել...

11.

Հէնց այդ նոյն ժամին, Արաքսի եզրին,
Հոֆն էր հեծեծում տխուր... ցաւագին...
Ծովակը գրկած սիրոյ հրեշտակին,
Համբոյր էր դրօշմում դալուկ շուրթերին:
Նեղ ձորի միջին իրար փարելով,
Սիրող սրտերը ուժգին թրթրոով,
Փախչում են փախչում, անվերջ հեռով
Առաջ են վազում, յիտ չընայելով...
Եւ վամպիր Մարտիկը մօտինը ուսին,
Նտեիցն ընկաւ զոյգ սիրահարի՝
Վճռեց սպանել իգիթ Ծովակին,
Սպանել նրան, տիրել Մարջանին:
Ու երկար վազեց, վաղեց կատաղած,
Դէպի Արաքսը, Արաքսն փրփրած.
Նա շատ լաւ գիտէր, թէ ինչ են վճռած,
Շտապել քանի, որ դեռ չեն անց կացած...
Ճիշտ է, վազում էր խեղճ Մարջանիկը,
Բայց շատ էր տանջւում նրա սրտիկը.

Հաւում էր մի ձայն իր սրտի մօտից,
«Ձուր ես շտապում» ուժով պիտ ինքդ
յանձնելս Մարտիկին:
Յանկարձ զղրդաց նեղ ձորը ուժգին,
Սօսինը ճչաց՝ թէ տեսայ զոյգին:
Եւ երկու ընկեր այն կողմ վազեցին,
Զայրոյթով լցւած. մօտիններն ուղղեցին:
Եւ ճիշտ էր ձայնը... Այդ նոյն վայրկեանին,
Գր՛ու... մի զնդակ դիպաւ Ծովակի սրտին.
Ծովակն հառաչեց տխուր... ցաւագին...
Ու վերջին անգամ նայեց էակին:
Ո՛հ, ամուր գրկեց նա իր Ծովակին,
Եւ խոնջած մարմինն յանձնեց Արաքսին...
Արաքսն է հոսում, կատաղած, ուժգին,
Տանում դէպի ցած այդ սիրոյ զոհին.
Մերթ բարձրացնում, զարկում հոսանքին,
Մերթ ցածրացնում, քսում յատակին...
Եւ պահ մի ալիք փրփրաց ուժգին,
Շարտեց գետի ափ, այդ չքնաղ կոյսին.—
Որը կեանք չէր ասիլ երբէք այն կեանքին,
Երբ պիտ ապրէր առանց Ծովակին...
Ո՛հ, անջատեցին նրանց իրարից,
Զոյգ ծաղիղներին զրկեցին կեանքից...
Հարսանեաց հանդէսն, ուրախ, խնդալի,
Փոխեց լաց, սուգի և նոյնիսկ մահի...



17836

H A P M.
H 2-715

38843

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

պատրաստ են տպագրութեան

«Դժբաղի ճակատագիր» (պօէմա)

«Մատնիչներ» (պատկեր իրական կեանքից) //

«Սիրոյ արցունքներ» (բանաստեղծութիւններ)

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

2073

